

Սիլվա Մարկոսյան ԿԸՅ անդամ

Ծնվել է 1961թ. հունվարի 25-ին Երևանում:

1979-1985թթ.՝ Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտ,
ինժեներ:

1985-1990թթ.՝ Երևանի Էլեկտրաշարժիչների գործարան,
ինժեներ:

1998-2002թթ. եղել է ՀՀ կենտրոնական ընտրական
հանձնաժողովի անդամ:

1998 – 2004թթ.՝ ՀՀ Նախագահի աշխատակազմում եղել
է Հանրապետության Նախագահին առընթեր մարդու

իրավունքների հարցերի հանձնաժողովի գլխավոր մասնագետ:

2002թ.՝ Ժողովրդավարության և մարդու իրավունքների եվրոպական
նախաձեռնության ծրագրի օժանդակությամբ դասընթաց՝ «Համաձայնության
հասնելու ուղին», Հարվարդի համալսարան, ԱՄՆ:

2003թ.՝ ՄԱԿ-ի զարգացման ծրագիր, դասաընթաց՝ ընտրական համակարգերի
ուսուցանողների որակավորման «Աջակցություն ժողովրդավարական
գործընթացներին Հայաստանում» ընտրություններ 2003թ. ծրագրի
շրջանակներում:

2003թ.՝ Ժողովրդավարություն և մարդու իրավունքների պաշտպանություն,
Միջազգային այցելուների ծրագիր Հայաստանի համար, ԱՄՆ:

2006թ.-ից մինչ օրս ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուների
մասնագիտական դասընթացների ուսուցանող է:

2004-2008թթ.՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի խորհրդական:

2008թ. հուլիս-2009 թ. օգոստոս՝ Շենգավիթ համայնքի ղեկավարի տեղակալ:


2007-2011թթ. եղել է ՀՀ թիվ 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի
նախագահ:

2009-2011թթ. եղել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալական
ապահովության վարչության պետի տեղակալ:

2001թ.՝ միջազգային դիտորդ Բելառուսի նախագահական ընտրություններում:

2003թ.՝ միջազգային դիտորդ Ուկրաինայի նախագահական ընտրություններում:

2005թ.՝ ուսուցում Լիտվիայի Մարդու իրավունքների պաշտպանի
ինստիտուտում:



2011թ. հուլիսին Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով նշանակվել է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ: